

ՆՈՐԵԼՅԱՆ
ՄՐՉԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Կամիլո Խոսե Սելա

Պասկուալ Դուարտեի
ընտանիքը



Երևան
«Անտարես»

Camilo José Cela
LA FAMILIA DE PASCUAL DUARTE

Իսպաներենից թարգմանեց
ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Սելա Կամիլո Խոսե

Պասկուալ Դուարտեի ընտանիքը: Վեպ/Կամիլո
Խոսե Սելա: Թարգմ.՝ Ռ. Պետրոսյան.– Եր.: Անտարես,
2022.– 208 էջ:

«Պասկուալ Դուարտեի ընտանիքը» վեպը (1942) պատմում է Պասկուալ անունով գեղջուկի մասին, որը մահապատժից առաջ գրի է առնում իր կյանքի պատմությունը, որը սկզբից մինչև վերջ ցավոտ և սուկալի խոստովանություն է սեփական սխալների և արյունալի գոյության մասին, որը նա ստիպված է եղել ապրել: Մարդն ի սկզբանե չա՞ր է ծնվում, թե՞ հասարակությունն է նրան այդպիսին դարձնում, ահա Պասկուալի միակ հարցը, որին ընթերցողը պետք է պատասխանի՝ ի վերջո նա զո՞հ է, թե՞ մարդասպան: Գրաքննադատներից շատերի կարծիքով՝ այս վեպը Իսպանիան ներսից պառակտող հիմնախնդիրների այլաբանական պատկերումն է, և ուրեմն, Պասկուալ Դուարտեի ընտանիքի միջոցով Կամիլո Խոսե Սելան բացահայտում, քննադատում է հետպատերազմյան տարիների ապականված Իսպանիան:

ISBN 978-9939-76-958-5



Վնճարես

© Heirs of Camilo José Cela, 2002

© «Անտարես», 2022

Այս հրատարակությունը
նվիրում եմ իմ թշնամիներին,
որոնք ինձ այնքան օգնել են
իմ կարիերայում

ՀՐԱՏԱՐԱԿԶԻ ԿՈՂՄԻՑ

Կարծում եմ՝ եկել է Պասկուալ Դուարտեի հուշերը փոպագրելու ժամանակը: Նախկինում դա անելը հավանաբար փոքր-ինչ հապճեպ կլիներ. չէի ուզում շրապել, որովհետև ամեն ինչ իր ժամանակն ունի, նույնիսկ ձեռագրի սխալ ուղղագրության շրկումը, ի վերջո, ինչպես ասում են՝ առուն չթռած՝ հոպ մի ասա: Ժամանակից ուշ դրանք ի դերև հանելը նույնպես հիմնավորված չէր լինի, որովհետև ցանկացած բան պետք է ի ցույց դրվի, երբ արդեն ավարտված է:

Այս գրքի նոթերը, որոնք հիմա փոխանցում եմ ձեզ, գրել եմ 1939 թվականի կեսերին Ալմենդրալեխոյի դեղատանը, որտեղ Աստված գիտի, թե ում անանուն ձեռքն էր թողել, այդ պահից սկսած զբաղվել եմ դրանց թարգմանությամբ և կարգաբերումով, քանի որ ձեռագիրը՝ մասամբ վար ձեռագրի, նաև չէջադրված լինելու պարզառով, գրեթե անընթեռնելի էր:

Նախևառաջ ուզում եմ հստակեցնել, որ սրեղծագործությունը, որն այսօր

ներկայացնում են հեղափոխության ընթաց-
ողին, իմը չէ, ես միայն շարադրել եմ, ոչինչ չեմ
ուղղել, չեմ ավելացրել, որովհետև ցանկացել
եմ պահպանել պատմության ոճը: Սրտեղծագոր-
ծության կոպրագույն հատվածների դեպքում
գերադասել եմ մկրատով աշխատել՝ կորելով
անառողջ մասերը, ինչն ակնհայտորեն զրկում
է ընթերցողին որոշ փոքրիկ մանրամասներին
տեղեկանալուց, թեև դրանից մեծ բան չի կորց-
նում, եթե չասենք՝ շահում՝ ականատեսը չդառ-
նալով մինչևիսկ զգվելի ինտիմ մանրամաս-
ների, որոնք, կրկնում եմ, ըստ իս, ավելի ճիշտ
է էլել, քան փայլեցնել:

Կերպարը, որին երևան բերելու համար, կար-
ծում եմ, թերևս միայն մեկ պատճառ կա, վար-
քագծային օրինակ լինելն է, ոչ թե ընդօրինա-
կելու, այլ նրանից խուսափելու համար, մեկը, որի
հարցում չի կարող որևէ կասկած լինել, մեկը,
որի դեպքում միայն կարելի է ասել:– Տեսնում ես՝
ինչ է անում: Հերևաբար պետք է ճիշտ հակա-
ռակն անել:

Հիմա թույլ տանք՝ Պասկուալ Դուարտեն խոսի,
նա հեղափոխիչ բաներ ունի մեզ պատմելու:

ՆԱՄԱԿ, ՈՐՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ԲՆՕՐԻՆԱԿԻ ՈՒՂԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

*Պարոն Խոսակին Բառերա Լոպեսին
Մերիդա*

Հարգարժան պարոն

Ներեցեք ինձ այս երկար պատմության և նույնքան երկար նամակի համար, սակայն պարզվում է, որ դոն Խեսուս Գոնսալես դե լա Ռիվայի ընկերներից (թող Աստված ների նրան, ինչպես որ ինձ ներեց) Դուք միակ մարդն եք, որի հասցեն հիշում եմ, ուզում եմ ուղարկել Ձեզ, որպեսզի ազատվեմ դրանցից, քանզի վառվում եմ գրելու մտքից, բայց որպեսզի տխրության պահին դեն չնետեմ, իսկ դրանք Աստված տվել, չի խնայել, չեմ ուզում մարդկանց զրկել սովորելուց այն, ինչ անձամբ եմ սովորել, երբ արդեն ուշ էր:

Փորձեմ բացատրել: Քանզի, ցավոք, գաղտնիք չէ, որ իմ ամբողջ կյանքը անեծքի բուն էր, և քանի որ ուզում եմ այս հրապարակային խոստովանությամբ հնարավորինս թեթևացնել խիղճս, ինչը պակաս ապաշխարանք չէ, որոշել եմ պատմել այն ամենը, ինչ հիշում եմ իմ

կյանքից: Լավ հիշողությամբ երբեք էլ չեմ փայլել, և գիտեմ, որ շատ հնարավոր է, որ մոռացել եմ շատ և նույնիսկ հետաքրքիր բաներ, բայց չնայած դրան, պատմել եմ այն ամենը, ինչը չի ջնջվել հիշողությունից, և ձեռքս չի դողացել գրելիս, քանզի կային բաներ, որոնք երբ փորձում էի պատմել, հոգիս այնպես էր ցնցվում, որ գերադասեցի լռել և մոռանալ հավետ:

Երբ սկսեցի գրի առնել այս հուշերը, քաջ գիտակցում էի, որ կլինի մի բան, որի մասին ոչ կերպ չեմ կարողանա պատմել (իմ մահվան մասին, թող Աստված արագացնի այն), այդ փոքրիկ հարցի վրա քիչ գլուխ չեմ ջարդել, և երդվում եմ այն քիչ կյանքով, որ մնացել է ինձ ապրելու, որ մի անգամ չէ, որ թվացել է, որ մտածելուց ուր որ է ուշքս կգնա, բայց մեկ է, չեմ հասկացել, թե որտեղ պետք է վերջակետ դնեմ: Մտածեցի, որ լավագույն բանը սկսելն է, իսկ շարունակությունը թողնել Աստծուն՝ երբ կամենա՝ թող ձեռքիցս բռնելով կանգնեցնի, այդպես էլ եղավ, այսօր, երբ թվում է՝ արդեն հոգնել եմ իմ բառերով սևացրած հարյուրավոր էջերից, վերջնականապես դադարում եմ գրել և Ձեր երևակայությանն եմ թողնում իմ կյանքի մնացած մասի վերակերտումը, որը պետք է

որ դժվար չլինի Ձեզ համար, քանզի ինձ մնացած կարճ կյանքի ընթացքում, չորս պատի մեջ նստած, չեմ կարծում, թե ինձ հետ մեծ և նոր բաներ կկատարվեն:

Երբ սկսեցի գրել այն, ինչն ուղարկում եմ Ձեզ հիմա, տանջվում էի այն մտքից, որ այդ ժամանակ ինչ-որ մեկն արդեն գիտեր, թե երբ եմ ավարտելու իմ պատմությունը կամ կիսատ թողնելու, եթե ժամանակը ճիշտ չհաշվարկեմ, և այն վստահությունը, որ իմ արարքները պետք է բռնի ուժով հետագծվեն արդեն կանխատեսված ակոսների վրա, ինձ հանում էր հունից: Այսօր, երբ ավելի մոտ եմ անդրշիրիմյան կյանքին, առավել հնազանդ եմ: Թող Աստված արժանի ներում շնորհի ինձ:

Ապրածս կյանքը պատմելուց հետո որոշակի թեթևություն եմ զգում, լինում են պահեր, երբ նույնիսկ խիղճս քիչ է ուզում տանջել:

Վստահ եմ՝ Դուք կկարողանաք հասկանալ այն, ինչի մասին չեմ ուզում խոսել, քանզի ավելի լավ կլինի՝ չիմանաք: Զղջում եմ, որ շեղվել եմ ճիշտ ճանապարհից, սակայն այս կյանքում այլևս ներում չեմ խնդրում: Ինչի՞ համար: Եթե ինձ հետ վարվելու են այնպես, ինչպես մտադիր են վարվել, գուցե այդպես ավելի լավ կլինի,

հակառակ դեպքում շատ հնարավոր է, որ նորից ապրեն առաջվա պես: Ես ներում չեմ հայցում, քանզի առանց այն էլ կյանքը լիքը վատ բան սովորեցրեց ինձ, իսկ ես թույլ եմ բնազդին դիմադրելու համար: Թող լինի այնպես, ինչպես Աստծու գրքում է գրված:

Պարոն դոն Խոակին, ձեռագիր թղթերի այս կապոցի հետ ընդունեք իմ ներողությունը Ձեզ դիմելու համար, և ընդունեք ներման այս խնդրանքը, որն ուղարկում եմ Ձեզ՝ անձամբ դոն Խեսուսի՝ Ձեր խոնարհ ծառայի կողմից:

*Պասկուալ Դուարտե
Բադախոսի բանտ, 15 փետրվարի, 1937 թ.*

**ԱՆԺԱՌԱՆԳ ՎԱԽՃԱՆՎԱԾ ԵՎ
ԻՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻԱՆՁՆՈՒՀԻՆԵՐԻՆ ԹՈՂԱԾ ԴՈՆ
ԽՈԱԿԻՆ ԲԱՌԵՐԱ ԼՈՊԵՍԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ
ՁԵՌԱԳԻՐ ԿՏԱԿԻ ԿԵՏԵՐԻՑ**

Չորրորդ. Հրամայում են գրասեղանիս դարակում գտնվող թելակապ և կարմիր մատիտով *Պասկուալ Դուարտե* գրված թղթերի կապոցն առանց կարդալու և անհապաղ կրակի տալ՝ որպես կաշան և ի հեճուկս բարեվարքության: Այնուամենայնիվ, եթե նախախնամությանը և առանց որևէ մեկի չարականության՝ վերը նշված կապոցը տասնութ ամսով ազատվի իմ կամեցած տույժից, գտնողին հրամայում են փրկել այն կործանումից, յուրացնել որպես սեփականություն և տնօրինել կամ օգտագործել՝ համաձայն սեփական կամքի, եթե համաձայն չէ իմ կամքի հետ:

Տրված է Մերիդայում (Բադախոս), իր մահճում, 1937 թվականի մայիսի 11-ին:

I

Մեծարգո ազնվազարմ դոն Խետուս

Գոնսալես դե լա Ռիվայի՝ Տոռեմեխիայի կոմսի հիշատակին, որը, ընդունելով այս ձեռագրի հեղինակին, նրան անվանեց Պասկուալիյո և ժպտաց:

Պ. Դ.

Պարոն, ես չար չեմ, թեև դրա համար պատճառներ ունեցել եմ: Մենք՝ բոլոր մահկանացուներս, թեև ծնվում ենք նույն մաշկով, բայցևայնպես, երբ մեծանում ենք, ճակատագրի կամոք փոխվում ենք մոմի պես և տարբեր ճանապարհներով ընթանում դեպի նույն կետը՝ մահը: Մարդիկ կան, որոնց տրված է քայլել ծաղկե ճանապարհով, մյուսներին՝ տատասկոտ և փշոտ: Առաջիկները խաղաղ հայացքով և անմեղ դեմքով վայելում են՝ ժպտալով երջանկության բույրով, իսկ երկրորդները տառապում են հարթավայրի կատաղի արևից՝ խոժոռ դեմքով, ինչպես գազանիկները

պաշտպանվելիս: Մարմինը ծաղիկներով և օդեկոլորնով պճնելու և կյանքի թողած անջնջելի հետքերի միջև մեծ տարբերություն կա:

Ես ծնվել եմ շատ տարիներ առաջ (առնվազն հիսունհինգ) Բադախոս գավառի կորած գյուղերից մեկում, Ալմենդրալեխոյից մոտ երկու լիգ հեռավորության վրա, սոված օրվա և բոլոր օրերի պես՝ կռացած հարթ և երկար ճանապարհի վրա (այնքան հարթ և երկար, որ հանուն ձեր բարօրության չարժի, որ պատկերացնեք) մահվան դատապարտվածի պես:

Շոգ ու արևոտ գյուղ էր, բավական հարուստ ձիթենիներով և խոզերով (ներողություն), հիշում եմ՝ աչք ցավեցնող վառ սպիտակ տներով, խճաքարե հրապարակով, մեջտեղում՝ երեք գեղեցիկ շատրվաններ: Քանի՜ տարի է անցել, ինչ հեռացել եմ գյուղից, այն ժամանակ էլ շատրվաններից ջուր չէր հոսում, բայց ի՛նչ չքնաղ էր, ի՛նչ նրբագեղ, մերկ պատանու կերպարանքով, եզրերը՝ խնկածաղիկների պես կլորիկ: Հրապարակում ծխախոտի տուփի պես մեծ և քառակուսի քաղաքապետարանն էր, մեջտեղում՝ աշտարակ, աշտարակին՝ տանտիրոջ պես ձեփ-ձերմակ ժամացույց, միշտ կանգնած ժամը իննի վրա, գյուղը կարծես

Նրա ծառայության կարիքը չունենա՝ բացի սուկ զարդարանքից:

Քաղաքում, ինչպես ամենուր և ինչպես ամենահաճախն է պատահում, բնական է, որ կային և լավ, և վատ տներ, դրանցից մեկը դոն Խեսուսի երկհարկանի առանձնատունն էր, որն այժմ էր շոյում իր սալիկապատ և ծաղկամաններով լինախասրահով: Դոն Խեսուսը բույսեր շատ էր սիրում, և որքան գիտեմ, տանտիրուհուն հրամայել էր խորդենիներին, հելիոտրոպներին, արմավենիներին և անանուխին հետևել նույնպիսի սիրով, ինչ երեխաներին, որովհետև պառավը, միշտ ջրով տարան ձեռքին, ջրում էր ծաղկամաններն այնպիսի խնամքով, ինչին, անշուշտ, ցողունները շնորհակալություն էին հայտնում իրենց թարմությամբ և վառ կանաչով: Դոն Խեսուսի տունը նույնպես գտնվում էր հրապարակում, սակայն տան հետ կապված մի տարօրինակ բան կար, դոն Խեսուսի պես տիրոջ համար, որը չէր վարանում մեծ ծախսեր անել, ինչի շնորհիվ նրա տունը տարբերվում էր մյուսներից, ի լրումն իմ ասած բոլոր լավ բաների՝ մի բան կար, որ զարմացնում էր բոլորին, ֆասադին նայելիս երևում էր սովորական, չսպիտակեցված քարի բնական գույնը,

ինչի պատճառով տունն ամենաաղքատիկն էր երևում, դրա համար նա երևի իր պատճառներն ուներ: Շքամուտքին թանկարժեք վահանե քարեր էին, ասում էին՝ դրանց եզրերին քանդակած էին հին ռազմիկների դեմքեր՝ իրենց գլուխներով և փետուրներով, որոնցից մի քանիսը նայում էին արևելք, մյուսները՝ արևմուտք, կարծես ուզում էին ցույց տալ, որ հսկում են չորս կողմը:

Հրապարակի հետնամասում՝ դոն Խետուսի տան կողմից, ծխական եկեղեցին էր՝ քարե զանգակատնով և զանգակով, որն այնպես էր հնչում, որ նկարագրել չեմ կարող, թեև հիմա էլ այնպես եմ հիշում, կարծես հնչում է բոլոր անկյուններից: Զանգակատան աշտարակը նույն բարձրության էր, ինչ ժամացույցինը, և ամռանը, երբ արագիլները գալիս էին, արդեն գիտեին, թե նախորդ ամռանը որ աշտարակի վրա էին բնավորվել. կաղ արագիլը, որը երկու ձմեռ էլ դիմացավ, ծխական եկեղեցու բնից էր, որտեղից էլ երևի ընկել էր, երբ տակավին շատ փոքր, վախեցել էր բազեից:

Իմ տունը գյուղից դուրս էր. գյուղից՝ մոտ երկու հարյուր քայլի վրա: Նեղլիկ, մեկհարկանի տուն էր, իմ դիրքին՝ սազական, բայց քանի որ

շատ էի սիրում, երբեմն հպարտանում էի դրանով: Իրականում տան մեջ միակ բանը, որ կարելի էր տեսնել, խոհանոցն էր, առաջին բանը, որ երևում էր ներս մտնելիս՝ միշտ մաքուր և խնամքով սպիտակեցրած, ճիշտ է, հատակը հողից էր, բայց այդքան տրորվելուց խճաքարե գծանկարների տեսք էր ստացել և չէր զիջում մյուս տների հատակներին, որոնց տերերը խճաքարեր էին լցրել գետնին ավելի ժամանակակից երևալու համար: Տունն ընդարձակ էր և պարզ, իսկ զանգի մոտ պահարանն էր՝ դեկորատիվ խեցեղենով, կապույտ գույնով ներկված հուշանվեր կարասներով, կապույտ կամ նարնջագույն պատկերներով ավսեններով, որոնցից մի քանիսի վրա դեմքեր էին նկարված, մյուսներին՝ ծաղիկ, որոշներին՝ ձուկ:

Պատերին տարբեր բաներ էին՝ շատ գեղեցիկ օրացույց, որի վրա պատկերված էր մի ջահել կին՝ հովհարը ձեռքին՝ նավակում նստած, իսկ ներքևում արծաթափոշե տառերով գրված էր «Մոդեստո Ռոդրիգես: Բարձրակարգ ապրանքներ: Մերիդա (Բադախոս)», Էսպարտերոյի գունավոր դիմանկարը՝ իր շքազգեստով և ևս երեք-չորս լուսանկար (մի քանիսը՝ փոքր, մյուսները՝ սովորական չափի) չգիտեմ ումն էին,

որովհետև միշտ տեսել եմ նույն տեղում կախված, բայց մտքով չի անցել հարցնել: Նաև պատից կախած զարթուցիչ, որը բանի պետք չէր, բայց, Աստծու կամոք, միշտ աշխատում էր, և գունավոր փետուրներով բարձիկ, որի վրա խցված էին թափանցիկ գլխիկներով գեղեցիկ քորոցներ: Խոհանոցի կահույքը փոքր էր և հասարակ՝ երեք աթոռ (մեկը շատ նուրբ, թիկնակով, կոր փայտե ոտքերով և ցանցավոր նստատեղով) և կաղնե սեղան՝ համապատասխան դարակով, որը փոքր-ինչ ցածր էր աթոռների համեմատ, բայց ծառայում էր նպատակին:

Խոհանոցում լավ էր, հարմարավետ, իսկ ամռանը, երբ արևը մայր մտնելուն պես պատուհանները բացում էինք մինչև վերջ, հով էր՝ չվառած օջախի քարին նստած, իսկ ձմռանը տաք էր խարույկի բոցերի կողքին, որոնք երբեմն վառ էինք պահում, որպեսզի ամբողջ գիշեր տաք մնար: Զվարճալի էր, երբ բոցերի ներքո նայում էինք պատերին երևացող մեր ստվերներին: Գնում-գալիս էին՝ երբեմն դանդաղ, երբեմն՝ փոքր ցատկերով, կարծես խաղում էին: Հիշում եմ, երբ փոքր էի, վախենում էի, մինչև հիմա, երբ արդեն մեծ եմ, այդ վախերը հիշելիս մարմնովս սարսուռ է անցնում:

Տան մնացած մասը նույնիսկ չարժե նկարագրել, սովորական էր: Եվս երկու սենյակ ունեինք, որոնք կարելի է սենյակ անվանել միայն նրա համար, որ այնտեղ ապրում էինք, ուրիշ ոչ մի բանի համար, և Բախո, որի մասին հիմա հաճախ մտածում եմ, թե ինչու էինք այդպես անվանում, երբ դատարկ ու անմխիթար էր: Ես ու կինս քնում էինք սենյակներից մեկում, մյուսում՝ ծնողներս, մինչև որ Աստված, կամ ով գիտի, գուցե սատանան, ցանկացավ տանել նրանց, հետո տունը գրեթե միշտ դատարկ էր, սկզբում, որովհետև ապրող չկար, ավելի ուշ, երբ ապրող հայտնվեց, միշտ գերադասում էր խոհանոցում մնալ, որը բացի լուսավոր լինելուց, նաև չէր փչում:

Երբ քույրս գալիս էր, միշտ քնում էր խոհանոցում, իմ երեխաներն էլ, մորից պոկվելուն պես վազում էին այնտեղ: Ճիշտն ասած՝ սենյակներն այնքան էլ մաքուր ու բարվոք չէին, բայց իրականում դժգոհելու բան չկար, կարևորը՝ կարելի էր ապրել՝ պաշտպանվելով Սուրբ ծննդյան տխուր ցրտից և օգոստոսյան Կույսի տապից: Ամենավատը Բախոն էր, մռայլ և մութ, պատերը՝ ներծծված սատկած գազանի այն նույն հոտով, որ գալիս էր քարայրից, որտեղ մայիս

ամսին ագռավները սկսում էին կոցել կենդանիների հոտած լեշերը:

Տարօրինակ է, բայց ջահել տարիքից, երբ այդ հոտը չէի առնում, մահվան տագնապ էի զգում, հիշում եմ, երբ գինվորագրվելու համար գնացել էի մայրաքաղաք, ամբողջ օրը, Աստված գիտի, թե որքան, քայլեցի՝ որսորդական շան պես օդը հոտոտելով: Երբ իջևանատանը պառկեցի քնելու, հոտոտեցի տաբատս, և արյունս տաքացրեց ամբողջ մարմինս: Բարձր մի կողմ հրեցի և գլուխս դրեցի ծալած շավարիս վրա, որպեսզի քնեմ: Այդ գիշեր մեռելի պես քնեցի:

Ախտոռում մի խեղճ ու կրակ, սմբած ավանակ ունեինք, որն օգնում էր մեզ կենցաղում, և երբ գործերը լավ էին լինում, ինչը, ճիշտն ասած, հաճախ չէր պատահում, մի երկու կամ երեք խոզ (Ներողություն) էլ էինք պահում: Տան հետնամասում ոչխարանոցի պես մի բան էր, շատ մեծ չէր, բայց լավ էր ծառայում, մեջը՝ ջրհոր, որը ժամանակի ընթացքում ստիպված եղա չորացնել, որովհետև միջից անառողջ ջուր էր հոսում:

Ոչխարանոցի հետևում առվակ էր հոսում, երբեմն՝ կիսաչոր, բայց ոչ երբեք լիքը,

գնչունների թափառախմբի պես կեղտոտ ու փիս հոտով, բայց որտեղ կարելի էր մի քանի գեղեցիկ օձաձուկ բռնել, ինչով էլ զբաղվում էի ցերեկները: Կինս, որը մի քիչ սրամիտ էր, ասում էր, որ օձաձկները հաստլիկ են, որովհետև նույն բանն են ուտում, ինչ դոն Խեսուսը, միայն թե հաջորդ օրը: Ժամերով կարող էի անջատվել և ձուկ որսալ, այնպես որ, երբ գալիս էր ունեցած-չունեցածս հավաքելու ժամանակը, համարյա միշտ մուլթ էր լինում, իսկ այնտեղ, հեռուների հեռվում, գետնին կպած հաստլիկ կրիայի կամ գետնից պոկվելու վախից ոլորված օձի պես երևում էին Ալմենդրալեխոյի էլեկտրական լուսերը:

Նրա բնակիչները, անշուշտ, տեղյակ չէին, որ ես ձուկ էի որսում, որ այդ պահին նայում էի, թե ինչպես են նրանց տան լույսերը վառվում՝ մինչևիսկ պատկերացնելով, թե ինչպես են նրանցից մի քանիսն ասում այն, ինչ անցնում է իմ մտքով, կամ քննարկում բաներ, որոնք արդեն պատկերացրել էի: Քաղաքի բնակիչները մեջքով են ապրում ճշմարտությանը և շատ անգամ չեն պատկերացնում, որ երկու լիզ այն կողմ՝ հարթավայրի մեջտեղում, մի գեղջուկ, ձկնորսական կարթը ձեռքին, մտածում է իրենց

մասին, հետո միայն գետնից վերցնում վեց կամ յոթ օձաձկով լցված հյուսկեն զամբյուղը:

Այնուհանդերձ, միշտ էլ մտածել եմ, որ ձկնորսությունն այնքան էլ տղամարդու գործ չէ, այնպես որ դրանով զբաղվում էի ազատ ժամանակ, գյուղում մարդիկ ինձ լավ ձկնորս էին համարում, համեստությունը մի կողմ, անկեղծորեն պիտի ասեմ, որ նրանք չէին սխալվում: Մի որսորդական շուն ունեի (անունը՝ Չիսպա), կես գարշելի, կես վայրի շուն էր, բայց իրար լավ էինք հասկանում, բազում առավոտներ միասին գնում էինք Լա Չարկա, գյուղից մեկուկես լիգ հեռավորության վրա, մինչև Պորտուգալիայի սահմանը, և երբեք դատարկաձեռն տուն չէինք վերադառնում: Հետ դարձի ճանապարհին շունն ինձնից առաջ էր ընկնում և միշտ սպասում էր խաչմերուկին, որտեղ ցածր աթոռակի պես կլորավուն տաշած քար կար, որի հետ կապված նույնքան հաճելի հիշողություններ ունեմ, որքան որոշ մարդկանց, թեև ոմանց չարժե նույնիսկ հիշել:

Քարը լայն էր, փոքր-ինչ խոր, և երբ նստում էի, հետույքս (ներողություն) հարմար տեղավորվում էր, այնքան հարմար, որ երկար ժամանակ մնում էի նստած, որսորդական հրացանը

նոտքերիս արանքը դրած, գլանակը բերանիս, սուլում էի՝ նայելով հեռուն: Շնիկը նստում էր իմ առաջ, հետևի երկու նոտքերի վրա և գլուխը մի կողմ ծռած՝ իր շագանակագույն երկու փոքրիկ և մշտարթուն աչքերով նայում էր ինձ, ես խոսում էի նրա հետ, իսկ նա կարծես ուզում էր հասկանալ ինձ, փոքր-ինչ բարձրացնում էր ականջները, իսկ երբ լռում էի, առիթից օգտվելով, վազ էր տալիս մորեխների հետևից կամ պարզապես դիրքն էր փոխում: Հեռանալիս, չգիտեմ թե ինչու, միշտ շրջվում էի քարի կողմը՝ կարծես հրաժեշտ տալու, և մի օր, շատ տխուր հրաժեշտին, հետ քայլեցի և նորից նստեցի քարին:

Շունը նորից փռվեց իմ առաջ և նայեց ինձ, հիմա եմ հասկանում, որ դա խոստովանողի հայացք էր՝ քննող, սառը, ինչպես ասում են՝ լուսանի մասին... ամբողջ մարմնովս սարսուռ անցավ, ձեռքերիս միջով կարծես հոսանք անցավ, ծխախոտը հանգել էր, իսկ նոտքերիս արանքում հանգրվանած միփողանի որսորդական հրացանը թույլ էր տալիս իրեն շոյել: Շունն ակնդետ ինձ էր նայում, կարծես երբեք չէր տեսել, կարծես ուր որ էր ինձ մեղադրելու էր ինչ-որ բանում, նրա հայացքն այնպես էր տաքացնում

Երակներովս հոսող արյունը, որ հասկացա՝ կգամի պահ, երբ ստիպված կլինեմ հանձնվել, շոգ էր, սարսափելի շոգ, աչքերս փակվում էին կենդանու՝ վրաս մեխի պես գամված հայացքից:

Վերցրի որսորդական հրացանն ու կրակեցի, հետո նորից լիցքավորեցի և կրակեցի: Շան մուգ և կպչուն արյունը դանդաղորեն տարածվեց ամբողջ գետնով մեկ:

ԿԱՄԻԼՈ ԽՈՍԵ ՍԵԼԱ
ՊԱՍԿՈՒԱԼ ԴՈՒԱՐՏԵԻ
ԸՆՏԱՆԻՔԸ

CAMILO JOSÉ CELA
LA FAMILIA DE PASCUAL DUARTE

Թարգմանիչ՝	Ռուզաննա Պետրոսյան
Խմբագիր՝	Արքմենիկ Նիկողոսյան
Հրատ. բաժնի ղեկավար՝	Հռիփսիմե Մադոյան
Տեխն. խմբագիր՝	Արարատ Թովմասյան
Սրբագրիչ՝	Անժելա Նիկողոսյան
Էջադրող՝	Նարինե Հովհաննիսյան
Շապիկը՝	Սոֆի Հարությունյանի
Կազմի ձևավորումը՝	Հասմիկ Թորոսյանի

Նորեյան բանախոսության
հատվածի թարգմանությունը՝ Ռուզաննա Պետրոսյանի



Անտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան 0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am